

**III.«2003 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ»
ԿԱՏԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳԾՈՎ ՄԻ ՔԱՆԻ
ՀԻՄՆԱՐԱՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԾԱՆՈՒՄ**

1. Վիճակագրությանը վերաբերող իրավական դաշտի բարելավում

Ի կատարումն «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի հոդված 11-ի 5 և 6 մասերով սահմանված դրույթների, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ կառավարության 2002թ. դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 2141-Ն որոշմամբ հաստատված հավելվածի կետ 300-ը, ՀՀ ԱՎԾ կողմից մշակվել և վիճակագրական տեղեկատվության թվով 54 սպառողների (այդ թվում՝ պետական մարմիններ, գիտակրթական հաստատություններ, հասարակական միություններ, զանգվածային լրատվամիջոցներ, միջազգային կազմակերպություններ և այլն) կարծիքին էր ներկայացվել «Հայաստանի Հանրապետության 2004-2006 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

«Հայաստանի Հանրապետության 2004-2006 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը» ներառում է երկրի տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և բնապահպանական իրավիճակի դիտարկման համար անհրաժեշտ վիճակագրական տեղեկատվությունը՝ հաշվի առնելով առկա ռեսուրսների սահմանափակումները, վիճակագրական տեղեկություններ տրամադրողների վրա դրվող պարտականությունների ծավալը և ծախսերի արդյունավետությունը:

ՀՀ կառավարության 2003թ. նոյեմբերի 6-ի նիստում օրենքի նախագիծն արժանացել է ՀՀ կառավարության հավանությանը և ներկայացվել ՀՀ Ազգային ժողով: ՀՀ Ազգային ժողովի դեկտեմբերի 25-ի նիստում օրենքի նախագիծն ընդունվել է առաջին և երկրորդ ընթերցմամբ:

«Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքում ամրագրված դրույթներին համապատասխանեցնելու նկատառումներից ելնելով, 2003թ. ընթացքում շարունակվել են մի շարք օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու ուղղությամբ իրականացվող աշխատանքները: Դրանք են.

1.1. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տեղեկատվական ներքին ռեգիստրների («համայնքների անձնագրերի») վարման բնագավառում համապատասխան լիազորությունների ամրագրման նկատառումներով պայմանավորված, ինչպես նաև ի կատարումն ՀՀ կառավարության 2002թ. դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 2141-Ն որոշմամբ հաստատված հավելվածի կետ 327-ի, ՀՀ ԱՎԾ կողմից մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Համայնքների անձնագրերի վարման տնտեսական արդյունավետությունը կարևորվում է նրանով, որ ի թիվս պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրերի շրջանակում հավաքագրվող տեղեկատվության,

վերջինս կարող է օգտակար լինել տվյալ բնագավառի քաղաքականությունը մշակող, իրականացնող և իրականացումը վերահսկող մարմինների համար՝ վերջիններիս ապահովելով բազմաբնույթ և մանրամասնեցված (և հատկապես՝ սկզբնական-անվանական) լրացուցիչ տեղեկատվությամբ:

1.2.«Պետական վիճակագրության մասին» և «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքների մի շարք դրույթների միջև առկա օրենսդրական հակասությունների վերացման նկատառումներով պայմանավորված՝ ՀՀ ԱՎԾ կողմից մշակվել և ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից հաստատվելուց հետո (ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 13.08.2003թ. թիվ 65-Ա որոշմամբ), շահագրգիռ նախարարությունների քննարկմանն (դիրքորոշմանն) է ներկայացվել «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որին ի պատասխան ստացվելիք առաջարկությունների և դիտողությունների ամփոփման արդյունքում, նախագիծը կներկայացվի նաև ՀՀ կառավարության քննարկմանը:

1.3.«Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի հոդված 17-ի «ա» ենթակետով սահմանված դրույթի իրագործման (*համաձայն որի. «Վարչական վիճակագրություն իրականացնող մարմիններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրավունք ունեն ... ա) ստանալ վարչական ռեգիստրների վարման համար անհրաժեշտ տվյալներ և տեղեկություններ իրավաբանական անձանցից, պետական հիմնարկներից և անհատ ձեռնարկատերերից»*), ինչպես նաև խնդրո առարկայի ենթօրենսդրական մակարդակում ամբողջացման նկատառումներից ելնելով՝ ՀՀ ԱՎԾ առաջարկությամբ Հայաստանի Հանրապետության մի շարք նախարարությունների և գերատեսչությունների (որպես՝ վարչական վիճակագրություն իրականացնող մարմիններ) կանոնադրություններում կատարվել են համապատասխան լրացումներ և/կամ փոփոխություններ՝ վիճակագրական տեղեկատվության հավաքագրման, ինչպես նաև վարչական վիճակագրական ռեգիստրների վարման բնագավառի լիազորությունները սահմանող առանձին դրույթի ամրագրման նպատակով, ինչը հնարավորություն կտա օժանդակել վարչական վիճակագրություն իրականացնող մարմինների գործառույթներից բխող՝ օպերատիվ վարչական մոնիտորինգի համար անհրաժեշտ բազմաբնույթ և մանրամասնեցված (և հատկապես՝ սկզբնական-անվանական) լրացուցիչ տեղեկատվության հավաքագրման աշխատանքներին:

1.4. Կազմակերպությունների կողմից իրականացվող գործունեության տեսակների՝ Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչով սահմանված գործունեության տեսակներին համապատասխանեցման, և ըստ այդմ, դասակարգչի սկզբունքների ու մոտեցումների կիրառման միասնականության ապահովման նկատառումներով պայմանավորված, ՀՀ կառավարության մի շարք որոշումներով հաստատվող՝ պետական ոչ առևտրային կազմակերպություններին և/կամ դրանց կողմից իրականացվող գործունեության տեսակներին առնչվող նախագծերում նշված (թվարկված) գործունեության տեսակները ՀՀ ԱՎԾ առաջարկությամբ խմբավորվել են համաձայն Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի:

1.5. ԱՄՀ ՏՏՀՍ-ին անդամագրման վարույթով սահմանված՝ հասարակության բոլոր կառուցվածքային միավորների համար պաշտոնական վիճակագրական տվյալների հավասար և միաժամանակյա մատչելիության ու հասանելիության նախապայմանի ապահովման ենթատեքստով, ՀՀ կառավարության 2003թ. հունիսի 26-ի նիստի թիվ 26 արձանագրության հանձնարարականների կետ 1-ի համաձայն, ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 1998թ. դեկտեմբերի 17-ի թիվ 61 արձանագրության հանձնարարականների 2-րդ կետը (խնդրո առարկա հանձնարարականն առնչվում էր «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցների նախագծերի՝ նախարարությունների և գերատեսչությունների պարտադիր նշագրմանը ներկայացնելու մեխանիզմի ներդրմանը): Թիվ 26 արձանագրության կետ 1-ով սահմանված հանձնարարականի կատարումը հնարավորություն ընձեռեց «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցների հրատարակման (տարածման) փաստացի ժամկետները նվազեցնել մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 30-րդ օրը (նվազումը՝ 10 օր):

«Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքից բխող ենթաօրենսդրական դաշտի կատարելագործման, ամբողջացման և օրենսդրության մեջ տեղի ունեցած փոփոխություններին համապատասխանեցման նկատառումներով պայմանավորված, ՀՀ ՎՊԽ կողմից հաստատվել են հետևյալ նորմատիվ իրավական ակտերը: Դրանք են.

2.1. «*Վիճակագրական տեղեկությունների ներկայացման կարգը հաստատելու մասին*» 2003թ. հոկտեմբերի 3-ի թիվ 11-Ն որոշումը: Նույն որոշմամբ, ՀՀ ՎՊԽ 2001 թ. հուլիսի 23-ի թիվ 56 որոշմամբ հաստատված նախորդ՝ վիճակագրական տեղեկությունների ներկայացման կարգը համարվել է ուժը կորցրած. հաշվի առնելով դրա ընդունմանը հաջորդած ժամանակահատվածում ՀՀ օրենսդրության մեջ տեղի ունեցած փոփոխությունների արտացոլման (իրավական ակտերին ներկայացվող պահանջների փոփոխություններ, հաշվապահական հաշվառման բնագավառի բարեփոխումներ և այլն), ինչպես նաև վիճակագրությունում տեղեկատվության հավաքագրման նոր տեխնոլոգիաների մշակման ու ներդրման, ինչպես նաև որոշ դրույթների հստակեցման անհրաժեշտությունը:

Կարգը սահմանում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված իրավաբանական անձանց (անկախ կազմակերպական-իրավական ձևից), անհատ ձեռնարկատերերի, օտարերկրյա իրավաբանական անձանց՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվող առանձնացված ստորաբաժանումների, ինչպես նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, պետական վիճակագրական դիտարկումների շրջանակում վիճակագրական տեղեկությունների ներկայացման կարգը:

2.2. «*Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2001 թվականի մայիսի 29-ի թիվ 51 («Հայաստանի Հանրապետության բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի վարման կարգը հաստատելու մասին*)» որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» 2003թ. մարտի 14-ի թիվ 06-Ն որոշումը, որի ընդունման նպատակահարմարությունը պայմանավորված էր ՀՀ ՎՊԽ 2001թ. մայիսի 29-ի թիվ 51 որոշման ընդունմանը հաջորդած ժամանակահատվածում օրենսդրության մեջ

տեղի ունեցած փոփոխությունների արտացոլման, ինչպես նաև կարգի որոշ դրույթների հստակեցման ու կատարելագործման անհրաժեշտությամբ: Նույն նկատառումներով պայմանավորված, ՀՀ ՎՊԽ 2003թ. մարտի 14-ի նիստում որոշումներ են ընդունվել նաև «Իրավաբանական անձանց վիճակագրական բիզնես /ձեռնարկատիրական/ ռեզիստրի հարցաթերթը» և «Իրավաբանական անձանց կողմից բիզնես /ձեռնարկատիրական/ ռեզիստրի տվյալների մասով ներկայացվող հարցաթերթի լրացման հրահանգը հաստատելու մասին» (թիվ 04-Ն որոշում) և «Անհատ ձեռնարկատերերի վիճակագրական բիզնես /ձեռնարկատիրական/ ռեզիստրի հարցաթերթը» և «անհատ ձեռնարկատերերի կողմից բիզնես /ձեռնարկատիրական/ ռեզիստրի տվյալների մասով ներկայացվող հարցաթերթի լրացման հրահանգը հաստատելու մասին» (թիվ 05-Ն որոշում):

2.3. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2001 թվականի օգոստոսի 15-ի թիվ 60 («Վիճակագրական տեղեկատվության հրապարակման ձևերի մասին կարգը հաստատելու մասին») որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» 2003թ. հուլիսի 1-ի թիվ 08-Ն որոշումը, որի ընդունման նպատակահարմարությունը պայմանավորված էր ՀՀ ՎՊԽ 2001թ. օգոստոսի 15-ի թիվ 60 որոշման ընդունմանը հաջորդած ժամանակահատվածում օրենսդրության մեջ տեղի ունեցած փոփոխությունների արտացոլման, ինչպես նաև կարգի որոշ դրույթների հստակեցման ու կատարելագործման (խնդրո առարկա ենթատեքստով՝ հաշվի առնելով նաև ԱՄՀ-ի ՏՏՀՄ-ով սահմանված որոշ նախապայմանների իրագործման հանգամանքը) անհրաժեշտությամբ:

2. Տարածքային (ռեզիոնայ) վիճակագրության զարգացում

Շարունակվել է ՀՀ ԱՎԾ մարզային գործակալությունների մեթոդաբանական կարողությունների ամրապնդման գործընթացը: Տարածքային (ռեզիոնայ) վիճակագրության արդյունավետության բարձրացման, վիճակագրության վարման միջազգային չափանիշներին իրազեկ լինելու նպատակով, մարզային գործակալությունների համար կազմակերպվել են սեմինարներ և խորհրդակցություններ, որոնք առնչվել են այնպիսի հարցերի պարզաբանմանը, ինչպիսիք են օրինակ՝ միջազգայնորեն կիրառվող տեխնիկատնտեսական ու սոցիալական տեղեկատվության համակարգը, Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչով սահմանված գործունեության տեսակները և դրանց խմբավորման սկզբունքներն ու առանձնահատկությունները և այլն:

Բացի այդ, ՀՀ ՎՊԽ առանձին որոշումների նախագծերի վերաբերյալ առաջարկությունների և դիտողությունների ստացման նպատակով, վերջիններս նախապես քննարկվել են նաև ՀՀ ԱՎԾ մարզային գործակալությունների հետ, որի կապակցությամբ հղվել են շրջաբերական գրություններ: Համապատասխան շրջաբերական գրություններ են (այդ թվում նաև՝ մեթոդաբանական պարզաբանումների տեսքով) հղվել նաև ԱՄՀ ՏՏՀՄ-ի, ինչպես նաև վիճակագրության միջազգային մեթոդաբանությանն առնչվող այլ զարգացումների վերաբերյալ:

3. Մեթոդաբանական կարողությունների զարգացում,

Նորմատիվ որոշումների գրանցում ՀՀ արդարադատության նախարարությունում

3.1. 2003թ. ընթացքում շարունակվել է ՀՀ ՎՊԽ նորմատիվ որոշումների, որպես գերատեսչական նորմատիվ ակտ՝ ՀՀ արդարադատության նախարարությունում գրանցման գործընթացը: Գրանցվել են ընդհանուր թվով 47 նորմատիվ իրավական ակտեր, որոնցից՝ պետական վիճակագրական 35 հաշվետվություններ և դրանց լրացման հրահանգներ (տես՝ հավելված 1):

Վիճակագրական դիտարկման փաստաթղթերի առումով հարկ է նշել նաև, որ 2003թ. ընթացքում հաստատված պետական վիճակագրական հաշվետվությունները համապատասխանեցվել են նաև ՏԳՏԴ-ով սահմանված սկզբունքներին և մոտեցումներին: Բացի այդ, վիճակագրական տեղեկություններ տրամադրողների՝ վիճակագրական հաշվետվություններով ծանրաբեռնվածության նվազեցման նկատառումներով պայմանավորված, փոփոխվել են պետական վիճակագրական մի շարք հաշվետվությունների ներկայացման ժամկետները և պարբերականությունը:

3.2. Հաշվի առնելով «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի հոդված 13-ի մաս 8-ի, ինչպես նաև ՀՀ ՎՊԽ 2002թ. մայիսի 10-ի «Վարչական (տեղեկատվական) ռեգիստրների վարման և դրանցից տեղեկատվության ստացման կարգը հաստատելու մասին» թիվ 109 որոշմամբ հաստատված կարգի դրույթները, 2003թ ընթացքում ՀՀ ՎՊԽ արձանագրային որոշումներով հավանություն է տրվել ՀՀ նախարարությունների և գերատեսչությունների կողմից հավաքագրվող վարչական վիճակագրական թվով 14 հաշվետվությունների (տես՝ հավելված 2), այդ թվում՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից հավաքագրվող վարչական վիճակագրական 11 հաշվետվություններ, ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հավաքագրվող վարչական վիճակագրական 2 հաշվետվություններ և ՀՀ առողջապահության նախարարության կողմից հավաքագրվող վարչական վիճակագրական 1 հաշվետվություն:

4. Վիճակագրական հաշվառման գործընթացի բարելավում

4.1. Վիճակագրական տեղեկատվության հավաքագրման ընտրանքային եղանակների կիրառական ընդլայնման նկատառումներով պայմանավորված, «Հաշվետվություն կազմակերպության տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ»՝ ձև թիվ 1-ՏԳ (եռամսյակային, տարեկան), «Հաշվետվություն կազմակերպության տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ»՝ ձև թիվ 1-ՏԳ (փոքր) (եռամսյակային, տարեկան), «Հաշվետվություն կազմակերպության գործունեության հիմնական ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ»՝ ձև թիվ 1-Ֆ (տարեկան), «Հաշվետվություն կազմակերպության հաշվարկների վերաբերյալ»՝ ձև թիվ 6-Ֆ (եռամսյակային, տարեկան) և «Հաշվետվություն կազմակերպության միջոցների կազմի և դրանց գոյացման աղբյուրների վերաբերյալ»՝ ձև թիվ 2-Ֆ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվությունների համար ներդրվել է ընտրանքային հավաքագրման մեխանիզմը:

4.2. Իրականացվել են Ծրագրով նախատեսված՝ «Մասնավոր հատվածի մինչև 100 աշխատող ունեցող տնտեսավարող սուբյեկտների» ընտրանքային հետազոտության ընտրանքը, ինչպես նաև հետազոտությամբ ստացված արդյունքների՝ գլխավոր համակցության վրա տարածման և գնահատման աշխատանքները:

4.3. Ավարտվել են նաև արդյունաբերողների արտադրանքի գների հաշվարկման համար անհրաժեշտ կազմակերպությունների ընտրանքի իրականացման աշխատանքները:

4.4. Պետական վիճակագրության բնագավառում կիրառվող վիճակագրական դիտարկման փաստաթղթերի միօրինականացման նկատառումներով պայմանավորված, ՀՀ ՎՊԽ 2003թ. հոկտեմբերի 3-ի թիվ 17 արձանագրային որոշմամբ հավանություն է տրվել «պետական վիճակագրական հաշվետվություն» և «պետական վիճակագրական ամփոփ հաշվետվություն» վիճակագրական դիտարկման փաստաթղթերի նմուշային տարբերակներին, ինչը հնարավորություն կտա նշված հաշվետվությունների ձևերի մշակման և կիրառման աշխատանքներն այսուհետ իրականացնել միասնական չափորոշիչների հիման վրա:

5. Մեթավյալներ

ԱՄՀ վիճակագրական վարչությունը տարբեր երկրների վիճակագրական տեղեկատվության որակի, թափանցիկության, տվյալների համադրելիության ապահովման, միջազգային հանրությանը դրանց օգտագործման ավելի լայն հնարավորությունների ընձեռման, կիրառվող մեթոդաբանության և դրա հետագա զարգացման ծրագրերին տեղեկացնելու նպատակով, հիմնել է Տվյալների տարածման ընդհանուր համակարգ՝ ՏՏՀ (1997թ. դեկտեմբեր) և Տվյալների տարածման հատուկ ստանդարտն՝ ՏՏՀՍ (1996թ. մարտ): Թվարկվածներից ՏՏՀ-ին Հայաստանի Հանրապետությունն անդամագրվել է դեռևս 2001թ. մարտի 29-ին:

Վիճակագրության համակարգային շարունակական զարգացման համար նախադրյալների ապահովման և որպես դրա նախապայման՝ ՏՏՀՍ-ին Հայաստանի Հանրապետության անդամակցության վարույթի նախաձեռնման նպատակով, ՀՀ վարչապետի 2003թ. հունվարի 17-ի թիվ 11-Ա որոշմամբ՝ ԱՄՀ ՏՏՀՍ-ին անդամակցման հարցերով ԱՄՀ անձնակազմի հետ քննարկումների և աշխատանքների Հայաստանի Հանրապետության համակարգող նշանակվեց ՀՀ ՎՊԽ անդամ Վ. Դանիելյանը: Համաձայն նշված որոշման կետ 2-ով և կետ 3-ի «ա» ենթակետով սահմանված դրույթների, համապատասխան ոլորտների վիճակագրությունների մասով աշխատանքների պատասխանատուներ նշանակվեցին նաև ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության, ինչպես նաև ՀՀ ԿԲ-ի համապատասխան մասնագետները:

ՀՀ ԱՎԾ, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ու ՀՀ ԿԲ-ի մասնագետների կողմից իրականացված համատեղ աշխատանքների արդյունքում, 2003թ. նոյեմբերի 7-ին Հայաստանի Հանրապետությունն անդամակցեց ՏՏՀՍ-ին (դառնալով այդ ստանդարտին անդամագրվող 54-րդ երկիրը), ըստ այդմ կատարելով նաև կարևոր քայլ՝ ուղղված երկրի վիճակագրական համակարգի համապատասխանեցմանը վիճակագրության ոլորտում միջազգային ամենախիստ ստանդարտին:

Անդամագրման մասին Հայաստանի Հանրապետությանը պաշտոնապես տեղեկացվեց ԱՄՀ վիճակագրության վարչությանը 2003թ. նոյեմբերի 7-ի գրությամբ: Այդ կապակցությամբ 2003թ. նոյեմբերի 7-ին ԱՄՀ կողմից տարածվեց նաև թիվ 03/186 մամլո հաղորդագրությունը:

Հայաստանի Հանրապետությունն ԱՊՀ անդամ երկրներից ՏՏՀՍ-ին անդամակցող երրորդ երկիրն է:

ՏՏՀՍ-ն պարունակում է դրա մշտական պահպանման խիստ պահանջներ, ինչի վերաբերյալ տեղեկությունը հրապարակայնորեն առկա է ԱՄՀ Ստանդարտների տարածման տեղեկագրում՝ <http://dsbb.imf.org/Applications/web/dsbbhome/>: Ստանդարտների տարածման տեղեկագիրը ներկայումս ներառում է համապարփակ փաստաթղթեր (մեքատվյալներ) անգլերեն լեզվով ՏՏՀՍ-ի տվյալների կատեգորիաների մասով Հայաստանի Հանրապետության վիճակագրական փորձառության վերաբերյալ, որը վկայակոչում է ՀՀ ԱՎԾ կողմից վարվող Ազգային ամփոփ տվյալների էջում ներառված երկրի արդիական տվյալները՝ <http://docs.armstat.am/nsdp/>:

Անցումը ՏՏՀՍ-ին հնարավորություն կընձեռի խորացնել վիճակագրության համակարգային զարգացման գործընթացը, ունենալով ժամանակին, վստահելի, ամբողջական և հանրությանը մատչելի տվյալներ: